

ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 256

ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 33×21 սմ.:—**Նյութը՝** հասարակ սպիտակ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միասյուն:—**Տողերը՝** 28:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** կոնդակն ունի երեք հատ սիրուն գունավոր թռչնագրեր և մի հատ կաթուղիկե երեք գմբեթով և չորս խաչերով:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Եփրեմ կաթողիկոս Ամենայն Հայոց:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1 մարտի 1814 թ.:—**Վայրը՝** ս. Էջմիածնի վանք:—**Ծանոթություն՝** ստացված է նվեր Երևանի բնակիչ հանգուցյալ Գրիգոր Շիրմազանի կողմից, 1964 թվի մարտ ամսին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Հետաքրքիր լինելու պատճառով տրվում է ամբողջ կոնդակի տեքստը).

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Եփրեմ կաթուղիկոս Ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարգ Առաքելական Եկեղեցւոյ Քրիստոսի, նաև գերագահ Աթոռոյս սրբոյ Էջմիածնի:

Աստուածային բազմապատիկ օրհնութեամբ և սիրով նուիրեմք զողջոյն Քրիստոսական բարեպաշտ սիրելեացդ մերոց և լուսածնունդ հարազատ որդւոցդ Սրբոյ Աթոռոյս՝ որք կայք բնակեալ ի Տիրախնամդ Կողբ, արժանապատիւ սրբագործ քահանայից, յարգելի իշխանաց և առ հասարակ ի Քրիստոս Աստուած հաւատացեալ օրհնեալ ժողովրդոցդ մեծաց և փոքունց խնդալ ի Տէր յարազուարճ բերկրանօք:

Շնորհք, սէր, ողորմութիւն, խաղաղութիւն և բարեբար ակնարկութիւն ամենասուրբ Երրորդութեանն ծաւալեսցի ի վերայ ձեր ամենեցուն և զարդարեալ ծաղկեցուսցէ զձեզ զամենեսին բազում բարութեամբք ամէն:

Որոց և գիտութիւն լիցի, զի հարազատ որդեակն մեր և Սրբոյ Աթոռոյս հանճարունակ Կարապետ վարդապետն գրեալ էր մեզ վասն ձեր զմեծ շնորհակալութիւնս, յաղագս նուիրելոյն ձեր Սրբոյ Աթոռոյս մինչև երեք հարիւր բեռն աղաքարս ըստ բարի սովորութեան ձերում: Ուստի և մեք շնորհակալ եղեալ ոչ սակաւ՝ օրհնեցաք և օրհնեմք զձեզ հանապազ հանդերձ բոլոր միաբանութեան: Արդ՝ սիրելիք մեր ի Տէր, յայտնի է լաւապէս, զի աստ գտանեցեալ բեռնակիրքն օրական հացի ցախն հազիւ ուրեմն կարողանան ժամանեցուցանել, եթէ մի օր պակասին, համարեցէք, թէ այսքան բազմութիւնքն մնան առանց հացի, վասն որոյ գրեցաք կողմանցդ օրհնեալ ժողովրդոցն, զի օգնութիւն արասցեն, նոյնպէս գրեմք աստ և ձեզ օրհնելոցդ, որ դուք ևս ի սէր մօրս ձեր լուսոյ օգնութիւն առնելով, պարտիք մինչև հարիւր բեռն աղաքարս՝ ձեր բեռնակրօքն բերել հասուցանել ի Շահրիար, որով արդարև և ևս առաւել շնորհակալութեամբ օրհնելոց եմք զձեզ, որ և կատարելով զայն ողջ լերուք ի Տէր:

1814, 1 մարտի, ի սուրբ Էջմիածին:
(Ստորագրություն կաթողիկոսի)

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից և Ժ-ից:

վասն ձեր Աղօթարարի

Եփրեմ կաթուղիկոս:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կոնդակի վերևում և կենտրոնում կա կաթողիկոսի կարմիր կնիքը—3,5 սմ. տրամագծով—որի կենտրոնում նկարված են երկու անձինք և մի աղավնի, իսկ շուրջ բոլորը գրված է հետևյալը).

Ընդ-ին Աստուծոյ Տէր Եփրեմ Կաթուղիկոս Ամենայն Հայոց—ՌՄԹ (1810 թ.):

№ 257

ՀԱՄԱՅԻԼ

Թերթերը՝ 1 հատ:—**Մեծությունը՝** 9.7×761 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած դիմացկուն թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** միապուն:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** չկա, սակայն կան երեք հատ տպագիր լուսանկարներ: Ձեռագրի սկզբում կպցված է Աստվածածնի և Որդու նկարը: Վերջավորության մոտերը կա Բ նկարը, որ ներկայացնում է Հովսեփին, Մարիամին և իրենց որդուն, իսկ ապա Գ նկարը, որ ներկայացնում է մի մարդ, որ մի ուրիշին բանալի է տալիս, իսկ ձախ ձեռքովն էլ մի եկեղեցի է ցույց տալիս: Սույն նկարներից բացի համայիլում երեք տեղում կան վեցական կապույտ կամ կարմիր ներկած մեծ քառակուսիներ, որոնց միջի շրջանակում կա գրություն:—**Գրիչը՝** Տիրացու Աստվածատուր:—**Պատվիրատուն՝** Մարտիրոս:—**Մաղկողը՝** շատ հավանաբար նույն ինքը գրիչը ներկել է սույն գունավոր քառակուսիները:—**Ժամանակը՝** 1795 թ.:—**Վայրը՝** Էրզրում:—**Մանոթություն՝** համայիլը ստացված է նվեր Ախալցխայից 1963 թ. մայիս ամսին տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի միջոցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայիլը պարունակում է Հավատով Խոստովանիմը, այլ աղոթքներ և մեջբերումներ չորս Ավետարաններից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

...զոր Տէր Աստուած հեռացուցէ ի ծառայիս Աստուծոյ Մարտիրոսին ամէն:

...արձակեալ և հեռայցիեալ եղիցի ծառայի Աստուծոյ Մարտի(ր)ոսին ամէն:

...Տէր Աստուած պահեայ և ազատեայ ծառայ Աստուծոյ Մարտիրոսին ամէն:

...ի դիմաց ծառայիս Աստուծոյ Մարտիրոսին ամէն (մի քանի անգամներ կա կրկնված):

...ծառայիս Աստուծոյ Մարտիրոսին ամէն (մի քանի անգամներ կա կրկնված):

...այն կապանօքն կապեսցի ծառայիս Աստուծոյ Մարտիրոսին չար կամաց լեզուն...

...եղիցի պահապան և օգնական ծառայիս Աստուծոյ Մարտիրոսին ամէն:

...ի կամս Աստուծոյ յորժամ երդայ ծառայս Աստուծոյ Մարտիրոս ի դատաւորին...

...հալածեցէք զտեկարութեան ծառայիս Աստուծոյ Մարտիրոսին:

...Տէր Յիսուս Քրիստոս փրկեայ և ազատեայ ծառայիս Աստուծոյ Մարտիրոսին ամէն:

...եղիցի բժշկութիւն ծառայիս Աստուծոյ Մարտիրոսին:

...զհաւատս որի Քրիստոս Յիսուս աղօթիւքն Տէր Յիսուս Քրիստոս ելեցոյ ծառայիս Աստուծոյ Մարտիրոսին ամէն:

...օվ քաղցր բարի Քրիստոս ողորմեայ ծառայիս Աստուծոյ Մարտիրոսին ամէն:

...արայ բժշկութեան ծառայիս Աստուծոյ Մարտիրոսին ամէն:

...փրկեայ և ազատեայ ամենայն փորձանաց ծառայիս Աստուծոյ Մարտիրոսին ամէն:

Թեվին ՌՄԽԴ-ին (1795 թ.) մարտի ամսոյ Ե գիրեցաւ համ(ա)ելս ձեռամբ մայրաքաղաքաց յԷրզրում գուղէն ի նվաստ տիրայցու Աստվածայտուրի՝ Տէր Աստուած վայելումն տացէ ծառայիս ամենայն Մարտիրոսին ամէն:

№ 258

ՀԱՄԱՅԻԼ

Թերթերը՝ 1 հատ:—**Մեծությունը՝** 8.5×473 սմ.:—**Նյութը՝** տեղ-տեղ կեղտոտած դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** չունի:—**Պահպանակները՝** չունի:—**Վիճակը՝** բավարար, սակայն վերջից մի քիչ թերի է:—**Գրությունը՝** միապուն:—**Գծումները՝** առանց ճնշումի:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** համայիլն ունի հաապակ ոճով նկարված հետևյալ նկարները՝ 12 առաքյալները, Հիսուսի խաչելությունը: Մարիամ Աստվածածին, ս. Հովհաննես Կարապետ, ս. Գրիգոր Լուսավորիչ, ս. Ստեփաննոս, Աբրահամ և Իսահակ, Գաբրիել հրեշտակապետ, ս. Գևորգ զորավար, ս. Մերկերիոս և ս. Սարգիս զորավար: Ձեռագրի վերնագրերն և նոր տողերի առաջին տառերը գրված են կարմիր գույնով: Կան նաև շատ հաապակ մի քանի զարդագրեր:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Պողոս:—**Մաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԸ դար:—**Վայրը՝** անհայտ:—**Մանոթություն՝** սույն ձեռագիրը նվեր է ստացված կահիրեաբնակ պրն. Ե. Քեստեբյանից, Վեհափառ Հայրապետի Եգիպտոս այցելության առթիվ 1963 թ. նոյեմբեր ամսին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայիլն պարունակում է զանազան աղոթքներ նվիրված Լուսավորչի, Ստեփաննոսի, Աբրահամի, Գևորգա զորավարի և այլոց:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

...ծառայիս Աստուծոյ Պողոսին: (Պողոս անունը նշված է 22 անգամ, որ հետագայում ջնջված է և տեղը գրված է այլ անուններ):

...զոր ազատեալ եղիցի ծառայիս Աստուծոյ Պողոսին. օգնական եղիցի և պահապան ամէն: Ապրեցոյ զիս Տէր ի մարդոց չարէ յանէ յանիրաւէ փրկեա զիս: Աստուած օգնել ինձ նպեաց և Տէր ընկերել ինձ փութաց:

...մանաւանդ ծառային Աստուծոյ Պողոսին ողորմեա դու ըստ եղծեր զիս մի կորուսաներ զծառայս քո Տէր Աստուած ամէն:

...ծառայիս Աստուծոյ Պողոսին օգնական եղիցի և պահապան ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատվիրատու Պողոսի անունը ջնջված է և գրված է «Անային» 16 անգամ, «Մուրատխանին» 13 անգամ և «Ցակոբին» 5 անգամ:

Համայիլի հետևի մասում գրված է.—

E. Kesdekian (9 անգամ, ձեռքի ռեզինե տառերով տպված).

Մարտիրոս (ձեռագիր գրված).

Souvenir de Mr. E. Kesdekian.

5—11—1963 (անունը տպված, մնացյալը ձեռագիր):

№ 259

ՀԱՄԱՅԻԼ

Թերթերը՝ 2 հատ (մին 64 սմ., իսկ մյուսը 366 սմ.):—**Մեծությունը՝** 7.4×430 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած թուղթ:—**Կազմը՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** անբավարար, սկզբից թերի:—**Գրությունը՝** միասյուն:—**Գծումները՝** առանց ճնշումի:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** համայիլն ունի շատ հասարակ նկարներ: Կան մի քանի նկարներ, որոնք ներկայացնում են հետևյալները՝ Քրիստոսի խաչելությունը, մի հատ մեծ զարդագիր (Ի), ավետարանիչներ, Մարիամ Աստվածածին և Որդին, ս. Գևորգն, որ սպանում է վիշապին, ծաղիկներ և թռչուններ: Անարժեք և անարվեստ նկարներ են սրանք:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Ներսես:—**Ծաղկողը՝** անհայտ, սակայն շատ հավանաբար համայիլի նույն ինքն գրիչն է:—**Ժամանակը՝** 1703 թ.:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** համայիլը ստացված է նվեր Ախալցխայից 1963 թ. մայիսին տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի միջոցավ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Փոքր թերթը տալիս է Հավատով Խոստովանիմի ինը գլուխները, իսկ մյուսները պակասում են: Մեծ թերթում կան աղոթքներ և Ավետարաններից մեջբերումներ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

...ծառային Աստուծոյ Ներսէսին ամէն (սույն անունը կրկնվում է 16 անգամ տարբեր տեղերում):

Մանուկին, Թոռնին, Անուռնին ամէն:

...ծառայիս Աստուծոյ Ներսէսին ամէն: Գրեցաւ համայիլս թվին ՌՃԾԲ (1703 թ.):

(Հիշատակարանի սույն տողերը գրված են տարբեր ձեռագրով):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Փոքր թերթի կոնակում գրված է).

Ի հազար ութն հարիւր եօթանասուն ամի ի մէկն յունվար ամսոյ եղև արու զաւակ մի Ստեփանոս անուամբ, Ցարութ Ստեփանովի ի պարկեշտութի դստերէ Հռիփսիմէ դիւրկեար Պողոսեան ի փծաբացուել արշալուսյն առաւօտին ժամուս:

(Շարունակելի)